Ի գիտություն

Հուղարկավորության կազմակերպումն իրականացվում է մահվան վկայականի հիման վրա։

1. Մահվան վկայականի տրամադրում

Մահվան վկայականը տրվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից՝ դիմումի հիման վրա։

Հասցեն՝ Արշակունյաց 18, թիվ 1 և թիվ 2 սենյակներ, հեռ. 524282։ Գրասենյակն աշխատում է ամեն օր։

Աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-16.00, շաբաթ և կիրակիօրերին՝ժամը 9.00-13.00։

Մահացածի մարմնի հերձման դեպքում մահվան վկայականը տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 715 որոշմամբ սահմանված կարգով՝ մահվան պատճառի մասին պաթոլոգաանատոմիական կենտրոնի կողմից անվճար տրված եզրակացության հիման վրա։

Առանց մահացածի մարմնի հերձման՝ մահվան վկայականը կարող է տրվել մահվան պատճառի մասին եզրակացություն տվող բժշկի տեղեկանքի հիման վրա։

2. Գերեզմանատան ընտրությունը

Գերեզմանատան ընտրությունը կատարվում է համաձայն Երևանի քաղաքապետի 29.09.2008թ. թիվ 4389-Ա որոշման՝ «Բնակչության հատուկ սպասարկում» ՊՓԲԸ–ում։

Հասցեն՝ Արշակունյաց 18, թիվ 4 սենյակ, հեռ 521644։
Գրասենյակն աշխատում է ամենօր. աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-16.00, շաբաթ և կիրակի օրերին՝ ժամը 9.00-13.00։

3. Գերեզմանատեղի ընտրությունը

Գերեզմանատեղը տրամադրվում է հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի կողմից արդեն իսկ ընտրված գերեզմանատանը։

Բոլոր գերեզմանատները աշխատում են ամեն օր ժամը 9.00-17.00՝ առանց հանգստյան օրերի։

Մահացածի մարմինը (աճյունը) հողին հանձնելու համար անվճար տրամադրվում է գերեզմանատեղ՝ 2.5 քառ. մետր մակերեսով (2.5 մ x 1.0 մ)։ Ընտանեկան գերեզմանի համար անվճար հիմունքներով տրամադրվում է առավելագույնը 12.0 քառ. մետր։

4. Հուղարկավորության կազմակերպումը

Մահացածի հուղարկավորության կազմակերպումն ստանձնողը «Բնակչության հատուկ սպասարկում» ՊՓԲԸ–ին (հասցեն՝Արշակունյաց 18) ներկայացնում է հուղարկավորության կազմակերպումն ստանձնելու մասին սահմանված ձևով գրավոր դիմում (հայտարարություն),

մահվան վկայականը և առաջարկություն հուղարկավորության տեղի վերաբերյալ։

«Բնակչության հատուկ սպասարկում» ՊՓԲԸ–ն հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի հետ համատեղ որոշում է հուղարկավորության տեղը, ինչպես նաև օրը և ժամը։ Հանգուցյալի թաղումը կատարվում է մահվան պահից ոչ շուտ, քան 24 ժամ հետո։

«Բնակչության հատուկ սպասարկում» ՊՓԲԸ–ն, մահվան վկայականի հիման վրա, համապատասխան գրանցում է կատարում թաղումների և գերեզմանատեղերի գրանցմանմատյանում և հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին տալիս է գերեզմանի վկայական։

Ընտանեկան գերեզմանի առկայության դեպքում գերեզմանատեղը հատկացվում է այդ գերեզմանի տարածքում՝ նախկինում տրված գերեզմանի վկայականի հիման վրա, որում կատարվում են համապատասխան գրանցումներ։ Նշված գերեզմանի վկայականի բացակայության դեպքում հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին տրվում է գերեզմանի նոր վկայական։

«Բնակչութան հատուկ սպասարկում» ՊՓԲԸ–ն հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին ներկայացնում է իր կողմից կատարվող՝ մահացածին հողին հանձնելու (գերեզմանի փորում, թաղման կազմակերպում, գերեզմանի կարգավորում, դիատար և այլ ավտոմեքենաների տրամադրում) և մատուցվող այլ վճարովի ծառայությունների ցանկը։

Նշված ծառայություններից օգտվելը կամավոր է։

Երևանի քաղաքապետարանի

«Բնակչութան հատուկ սպասարկում» ՊՓԲԸ տնօրինություն